

1. Ս. Կուսի ննջման ասանդութիւնը .

Ս. Կուսին մահուան ու թաղման պարագաները Աւետարանի մէջ պատմուած չեն . աւանդութիւնն է որ մեզի կը տեղեկացնէ Յիսուսի մօր մահուան ու թաղման առթիւ տեղի ունեցած յիշատակները : Գեթսեմանիի մէջ կը թաղուի Ս. Կոյսը ու անկէ մարմնով կը վերափոխուի երկինք, ինչպէս կ'ընդունի եկեղեցին . այս մասին որքան Աւետարանի պատմութիւնը ժլատ է, նոյնքան առատ են անվաւերական գրուածքներ, որոնք որքան որ նոր ժամանակներու գործ նկատուին, բայց դարձեալ անոնք հին աւանդութեանց արձագանգները կրնան համարուիլ : Ս. Կուսի ննջման և թաղման տեղեւոյ մասին աւանդութիւնը կրկին է, մին Եփեսոսի և միւսը Երուսաղէմի . Եփեսոսի աւանդութեան գլխաւոր փաստը առաւելագէս կը ներկայանայ Եփեսոսի ժողովի (431) հայրերուն սինոդական նամակին մէկ պարբերութենէն, որով նոյն հայրերը կը գրեն Կ. Պոլսի կղերին թէ Նեստորիոսը դատապարտուած է Եփեսոսի մէջ, ուր (կային) Յովհաննէս Աստուածաբանը և Տիրամայր Ս. Կոյս Մարիամ . . . : Սօսքին պարբերութիւնը առկախ ձգուած է և ունի գիտումնաւոր զեղչման մը գարծուածքը . այս հատուածը շատ մութ կէտեր կը պարունակէ, և չի կրնար զիմանալ քննութեան : Շատ մը քննիչներուն նայելով՝ Եփեսոսի ժողովի հայրերը մեկնողական ըմբռնումի մը ազդեցութեան տակ հաղորդած են նոյն տեղեկութիւնը Պոլսի եկեղեցիներուն : Եփեսոսի շրջականները գտնուած վերջին վիւտերը փաստ մը չեն կրնար ըլլալ Եփեսոսեան կեղակարծ աւանդութեան . հաւանական է որ ան յերկրուած ըլլայ հակառակ Երուսաղէմի բազմաթիւ և յայտնի աւանդութեանց որ կը պատմուին անվաւերական գրոց մէջ : Եփեսոսի ժողովէն վերջ երկար դարեր լուծ է Եփեսոսեան աւանդութիւնը . իսկ Երուսաղէմիւնը աւելի աճած ու զարգացած է և ճիշտ գրականութիւն մը ունեցած է անվաւերականներու հրատարակութիւններով, որոնց եզրակացութիւնը, ինչպէս նաեւ ժամանակագրութիւնը, և Նոր Կտակարանի ինչ ինչ մասերը մեզ կը համոզեն թէ Ս. Կոյսը ձերացեալ տարիքին մէջ Երուսաղէմ մեռած է և թաղուած է Գեթսեմանիի մէջ և վերափոխուած է իր գերեզմանէն, որուն վրայ շատ կանուխէն շինուած է եկեղեցի մը : Զեռագիրներու մէջ կը գտնուի անվաւեր գրութիւն մը Թուրք